



ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ և ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ և ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԱԽԱԳՅԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ներկայումս ՀՀ հարկային օրենսգիրքը սահմանում է, որ միասնական հաշիվը Օրենսգրքով սահմանված դեպքերում հարկ վճարողների հարկային պարտավորությունների մարման նպատակով գանձապետարանի կողմից վարվող պետական արտաբյուջետային միջոցների ավանդային ենթահաշիվ է, իսկ 327-րդ հոդվածը սահմանում է, որ միասնական հաշվում առկա գումարները ենթակա են վերադարձման հարկ վճարողին նրա կողմից հարկային մարմին ներկայացված՝ հարկային մարմնի սահմանած ձևով և կարգով լրացված դիմումի հիման վրա՝ այն ստանալուց հետո՝ 20 օրվա ընթացքում:
Նախ պետք է նկատի ունենալ, որ ըստ օրենսգրքի՝ միասնական հաշիվը ավանդային հաշիվ է, որի նկատմամբ համապատասխանաբար պետք է կիրառելի լինեն ավանդի օրենսդրական կարգավորումները: Բացի այդ, ըստ օրենսգրքի՝ պետական մարմնի պարտավորության կատարման ժամկետը 20 օր է և պարտավորության չկատարումից հետո անմիջապես կետանցի յուրաքանչյուր օրվա համար պետք է տույժ վճարովի և անհասկանալի է 90 կամ 30 օրը սահմանելը: Միաժամանակ առաջարկում ենք տույժի չափը հավասարեցնել հարկ վճարողի կողմից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար սահմանված տույժին՝ 0.075 տոկոս, ի տարբերություն ներկայիս սահմանված 0.03-ի:
2. Ողջունելի է նախագծում 11.1 հոդվածով սահմանված դրույթների ներառումը նախագծում:
Բացի այդ, ցանկանում ենք նշել, որ ասոցիացիայի զբոսաշրջության ոլորտի անդամների կողմից բարձրաձայնվում է տնտեսավարողի կողմից իր ապրանքային նշանի, կոնտակտային տվյալների կամ ուղենշող գրությունների՝ իր տարածքից դուրս տեղադրման

բարդությունների մասին, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանված՝ գովազդի տեղաբաշխման (տեղադրման) չափորոշիչներում՝ երկիմաստ և տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվող դրույթների մասին: Առաջարկում ենք օրենքում թվարկել գովազդի տեղաբաշխման հիմնարար չափորոշիչները կամ վերապահել այն ՀՀ կառավարության իրավասությանը և ըստ հաստատված հիմնական չափորոշիչների՝ վերանայել տեղական ինքնակառավարման մարմինների այդ որոշումները, ինչպես նաև ստեղծել բողոքարկման արտադատական համակարգ՝ տվյալ որոշումները արագ, ծախսարդյունավետ և թափանցիկ եղանակներով բողոքարկման համար:

3. Ընդհանուր առմամբ, առաջարկում ենք քննարկել և «Գովազդի մասին» ՀՀ օրենքը լրացնել ինտերնետային գովազդի առանձնահատկությունները կարգավորող իրավական դրույթներով: